

ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ 2016



Վանաձորի Գևորգ Չաուշի
անվան թիվ 24 միջն. դպրոցի
ինֆորմատիկայի ուսուցչուհի
Անահիտ Բաղդասարյան

Դասի նպատակը՝ -Գիտելիքների հաղորդում համացանցի, նրա վտանգների, դրանցից զերծ մնալու և խաբեության զոհ չդառնալու, վիրուսներից պաշտպանվելու, համացանցից ապահով և անվտանգ օգտվելու, ինչպես նաև համացանցը օգտակար միջավայր դարձնելու համար:

Անհրաժեշտ սարքավորումներ- համակարգիչ, պրոյեկտոր, էկրան, պաստառներ, գունավոր թղթիկներ, փուչիկներ:

Դասի պլանը

1. Դասի նպատակի ներկայացում: 3 րոպե
2. Թեստավորում <http://safe.am/esafetykit> 5 րոպե
3. Թեմաների ներկայացում: (1.Համացանցի պատմությունը, 2. Վիճակագրություն,3. Էլեկտրոնային փոստ, գրադարաններ, գրուցարան, երաժշտություն, պատկերներ, թարգմանիչներ, 4. Բլոգ Սոցիալական ցանցեր, Վեր 2 , 5.*Համացանցային անվտանգություն, *հետապնդումներ, *ոտնձգություններ *վիրուս և հակավիրուս) 15 րոպե
4. Տեսահոլովակի դիտում 2 րոպե
5. Քննարկում՝ հարց ու պատասխան 5րոպե
6. Թեստավորում E Safety Kids խաղի օգնությամբ 8 րոպե
7. Ամփոփում, Խորհուրդներ 3րոպե
8. Խաղ՝ հիշողություն 4րոպե

Դասի ընթացքը

1. Նախապատրաստական մաս

Անվտանգ Համացանցի օրը նշվում է աշխարհի ավելի քան 110 երկրներում: Առաջին անգամ այն նշվել է 2004թ.-ին, իսկ Հայաստանում նշում են 2009թ.-ից: Մեր նպատակն է աշակերտներին ցույց տալ համացանցի հնարավորությունները, նրա վտանգները և նրանցից պաշտպանվելու միջոցները:

2. Թեստ

Սկզբում աշակերտները լրացնում են safe.am կայքի թեստերը, գրանցում իրենց հավաքած միավորները: Այնուհետև աշակերտներին տրվում են գունավոր թերթիկներ, կարմիր թերթիկի վրա գրում են թե ինչ գիտեն համացանցի մասին, դեղին թերթիկի վրա՝ ինչ են ուզում իմանան, իսկ դասի վերջում կանաչ թերթիկի վրա գրում են թե ինչ սովորեցին այսօր: Այդ թերթիկներն ամրացնում են ԳՈՒՍ (գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի) ներկայացնող պաստառի համապատասխան բաժնում:

3. Թեմաների ներկայացում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համացանցի մասին սկզբնական ինֆորմացիան աշակերտները ստանում են 7-րդ դասարանում և մինչև 11-րդ դասարան , տարեց տարի համալրում այդ գիտելիքները՝ դասին մասնակցելու համար ընտրել եմ 7-րդ և 11-րդ դասարանի աշակերտներ: Պաստառները պատրաստել են 7ր դասարանի աշակերտներ Անահիտ Մկրտչյանը և Անի Սեփիանյանը:

11-րդ դասարանցիները պատրաստել են համակարգչային ցուցադրում, որտեղ ներկայացնում են համացանցի ծառայությունները: Մանրամասնորեն պատմում են յուրաքանչյուր ծառայության հնարավորությունների մասին:

<https://sway.com/zFNmJRu4DFdg5iAZ>

<http://www.slideshare.net/secret/ILfDPZsQFIW4Sy>

4.Տեսահոլովակ Աշակերտները դիտում են տեսաֆիլմ համակարգչային վիրուսի և համացանցում կատարվող խաբեության վերաբերյալ:

<https://youtu.be/JVfRP8Hokko>

<https://youtu.be/6asXiJAZBts>

5.Քննարկում

Աշակերտներին տրվում է թերթիկներ, նարնջագույն թերթիկների վրա գրում են թե իրենք ինչ կայքերից են օգտվել, վարդագույն թերթիկի վրա գրում են թե ի՞նչ վտանգների են հանդիպել կամ գիտեն: Թերթիկներն ամրացնում են “Համացանցի հնարավորությունները”, “Համացանցի վտանգները” բաժիններից բաղկացած պաստառի վրա:

Հարցեր

- Ո՞ր տարիքից կարող են երեխաներնը համացանց մտնել:
- Ինչ տնային կանոններ պետք է մշակել համացանցի օգտագործման համար:
- Ո՞ր տարիքից երեխաները կարող են օգտագործել Ակնթարթային հաղորդակցման ծրագրեր:
- Կարո՞ղ են ծնողները կարդալ երեխայի հաղորդագրությունները:
- Կարո՞ղ են երեխաները ստեղծել բլոգներ կամ մտնել այնպիսի սոցիալական ցանցեր, ինչպիսիք են Facebook-ը և Odnoklassniki-ն են:
- Արդյո՞ք վեբլոգիկները հուսալի են երեխաների օգտագործման համար:
- Կարո՞ղ են երեխաները կախվածություն ձեռք բերել համացանցից:
- Ի՞նչ գիտեն երեխաները համակարգչային վիրուսների մասին:
- Ի՞նչ պետք է անել, երբ անհանգստացնում են համացանցում:

Սկզբում հարցերին պատասխանում են 7-րդ դասարանի աշակերտները, այնուհետև 11-րդ դասարանի աշակերտներն ասում են իրենց տեսակետը և ուսուցիչն ամփոփում և ուղղում է հարկ եղած դեպքում:


6. Թեստ

Աշակերտները լրացնում են դասի սկզբում լրացրած թեստը և համեմատում արդյունքները, որը կարելի է ասել գերազանց էր:

7. Ամփոփում

Համեմատում ենք ԳՈԻՍ պաստառի բաժիններում գրվածները և գալիս այն եզրակացության, որ աշակերտներ ստացան իրենց ցանկացած գիտելիքները և բազմաթիվ նորություններ իմացան համացանցի ծառայությունների, նրա վտանգների և նրանցից պաշտպանվելու միջոցների մասին:

<https://youtu.be/pJEJuvLnXDo>



Համեմատում ենք և “Համացանցի հնարավորությունները”, “Համացանցի վտանգները” պաստառի վրայի թերթիկների քանակը: Աշակերտները համոզվում են, որ համացանցի ծառայություններն ու օգուտներն ավելի շատ քան վտանգները:



Վերջում դիտում են տեսանյութ՝ խորհուրդներ- համացանցի վտանգներից պաշտպանվելու և էթիկայի կանոնները պաշտպանելու մասին, որը պատրաստել է 11ա դասարանի աշակերտուհի Նաիրա Արաբաչյանը:

<https://www.youtube.com/watch?v=EL1i0cSlFlg>

9. Խաղ՝ հիշողություն

7 հոգի շրջան են կազմում: Ուսուցչի նշած աշակերտն ասում է համացանցի մի ծառայության անուն, նրա կողքի աշակերտը կրկնում է առաջինի ասածը և ավելացնում մի հատ , հաջորդը կրկնում է նախորդի ասածը և ավելացնում եւս մեկը, այսպես մինչև վերջին աշակերտը, ով չի հիշում նախորդի ասածները կամ չի կարողանում մեկ հատ ևս ավելացնել դուրս է մնում: Վերջում մնացել էին 5 աշակերտ, որոնք ոչ մի կերպ չէին հանձնվում, սակայն դասի զանգը ավարտին հասցրեց խաղը: